



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

13410

Սահմանադրութիւն
Օսմանեան

342
U-15

Կ Պոլս
1876

706



ՄԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ
ՕՍՄԱՆԵԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿԵԱՒ, Ի Վ ԶԻՆՀԻՃՅԻՒ ԿՎԿՏ ՏԱՐԻՈՑ

ԹԱՐԳԱՆՆԵԱՑ Ի ԳԱՂՂԻՐԵՆ ԲՆԱԳՐԵՆ

ՄԻՀՐԱՆ Յ. ՍԵՎԱՅԵԱՆ

ԳԻՆ Զ ԴՐԵ

342
U-15

2010

42
42
15

1913 - 20 24/11

ՔԱՆԻ ՄԸ ԽՕՍԲ

Վերջին չարաթ օրն Օսմանեան պատմութեան տարեգրութեանց մէջ կարեւոր տեղ մի պիտի գրուէ :

76 ի դեկտ. 11ը՝ Օսմանցոց քաղաքակրթութեան և արդարութեան նշանաւոր մի թուականն է, և իբր այն՝ դարագլուխ նոցա ապագայ բարեկեցութեան, զարգացման և երջանկութեան :

Օսմանեան կայսրութիւնը՝ մի և երկու տարիներէ հետէ կը բաժնուի իր տառապանքներէն և անձուկ հոգերէն յետոյ, անժխտելի ապացոյց մի կուտայ աշխարհի, թէ կամք և ջանք տնի միանգամայն երկիրն գոհացուցիչ վիճակի մը մէջ դնելու և կը յայտարարէ թէ այս նպատակին հասնելու համար ՍՍՀՄԱՆԱԳՍԿԱՆ ԿԱՌԱՎՈՐՈՒԹԵԱՆ եղանակը կ'ընտրէ իբրև միակ միջոց փրկուէա :

Հայը՝ Օսմանցի քաղաքացոց մի կարեւոր տարրն, վաղուց ճանչցած էր այս սկզբանց բանաւորութիւնը և գործնական փորձ մ'ալ տուած էր առ այս, իւր ազդային ներքին գործոց վարչութիւնը Սահմանադրականին վրայ ձեւակերպելով 'ի շնորհրդս երջանկայիշատակ Ապտ-իւլ-Մէճիտ Խանին :

Այսօր իւր վեհափառ Որդին՝ Օգոստ. Ապտիւլ Համիտ Խան՝ կը ճանչնայ Սահմանադրութեան կենսաւէտ սկզբանց ու ոգւոյն օգտակարութիւնը, և իւր բարեյիշատակ Ծնողին սկսած ԹՄՆ-ՉԻՄՍԹԻ գործն ի կատար կ'ածէ, Սահմանադրական հրատարակելով իւր կառավարութիւնը :

Փառք Նորին վեհափառութեան :
Վեհ. Սուլթանին լուսամիտ և իմաստուն սկզբունքն և Բարձր. Մեծ. Եպարզութիւն՝ Միտհաթ փաշայի՝ երկրին վերածնութեան և հաստահիմն զարգացման նուէ եալ երկարժամանակեայ անդուլ ջանքերն ու ճգունքն, իւր անդրդուելի հաստատամտութիւնն մեծ երաշխիք մը կ'ընծայեն թէ Սահմանադրութեան կատարեալ գործադրութիւնը մերձակայ ժամանակի մը մէջ տեսնելու բաղձը պիտի ունենանք :



100001

24294-60

671-50

Դեկտ. 11 Թուակասին վրայ այսչափ ինչ բաւական համա-
րելով, կանցնիմք բացատրելու մեր սոյն գործոյն հրատարակման
շարժառիթը :

Հայ թերթերէն Մանղումէ՝ Սահմանադրութեան Տաճկա-
բարբառ բնագիրն Հայ տառերով հրատարակեց, և միւս թեր-
թերն ալ հետզհետէ մաս առ մաս նորա թարգմանութիւնը հրա-
տարակելու վրայ են :

Սակայն Հայերէն ամբողջ թարգմանութիւնը և ոչ մի թեր-
թի մէջ տեսնուեցաւ :

Այս պարագայէն զատ, 'ի նկատի ունելով՝ որ այսպիսի կա-
րեւոր գործի մը թերթի միջոցաւ և եթ հրատարակութիւնը բա-
ւական չէ պէտքը դժհասցնելու այն Ազգայնոց՝ որք Գաղղիարէն
կամ Թուրքերէն լեզուաց հմուտ չ'են, և մանաւանդ մեր դա-
ւառացի Ազգայնոց, պատշաճ դատեցինք զայն Գաղղիարէն բը-
նագրէն թարգմանելով տետրակի ձեւով հրատարակել, որպէս
զի դիւրութիւն մը ընծայէ 'ի գործածութիւն և կարենայ թան-
գարանի մը մէջ անկորուստ պահուիլ :

Յուսամք որ մեր այս ձեռնարկը իբրև շահագիտութիւն
(սքէքիւլասիօն) չըմեկնուիր, և ընդհակառակն ծառայութիւն մի
մատուցած կըլլամք Պօլսեցի կամ դաւառացի մերազնէից, հա-
յաբարբառ ներկայացնելով իրենց Օսմանեան Կայսրութեան
Սահմանադրական օրէնքն, որոյ տրամադրութեանն համաձայն
այսուհետև կատարեալ Օսմանցի քաղաքացիներ պիտի լինին :

Կը սիրեմք հաւատալ միանգամայն որ ընթերցողք ներողա-
միտ աչօք պիտի նկատեն թարգմանութեանս մէջ սպրդած ա-
կամայ թերութիւններն, եթէ երբէք կան, դիտելով որ մի քա-
նի ժամուան սուղ միջոցի մը մէջ եղած է սոյն թարգմանու-
թիւնը :

Բերա. 13 Դեկտեմբեր 1876

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ

40309, 1004.



ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՀՐՈՎԱՐՏԱԿ

(ԽԱԹԹԸ ՀԻԻՄԱՅՈՒՆ)

ՎԱՍՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ

ՕՍՄԱՆԵԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ

«Իմ բարձրաշուք Վէզիրս Միտհաթ փաշա.
«Նկատելով որ մեր Օսմանեան Պետութեան զօրութեան ժա-
ւանակէ մ'ի վեր ունեցած նուազումը արտաքին հոգերէ աւե-
«լի, ներքին Վարչական գործոց ուղիղ ճանապարհին խոտորւմ-
«նեղէն և հպատակաց առ իրենց կառավարութիւնն ունեցած
«վստահութիւնը երաշխաւորող միջոցներուն նուաստանալու և
«տկարանալու տրամադրութենէն յառաջ կուգան, Երջանկայիշա-
«տակ Հայրս, Հանգուցեալ Ապտ-իւլ-Մէճիտ խան, իբրև բարե-
«նորդմանց կանխաբան և Շէրի-Շէրիֆի նուիրական տրամա-
«դրութեանց համաձայն, հանրութեան կենաց, ընչից և պատ-
«ւոյ ապահովութիւնը հաստատող բարենորոգման (Թանղիմաթ)
«Խաթիթը հրատարակած էր : Եւ ահա ցայսօր մեր սոյն ապահո-
«ւթեան շրջանակին մէջ ապրիլն, և նոյն ապահովութեան մի-
«ջոցաւ ազատօրէն փոխանակեալ կարծեաց և սկզբանց իբրև ար-
«գասիք՝ այսօր այս Հիմնական կանոնը (Սահմանադրութիւն) գը-
«նելու և հրատարակելու յաջողութիւնն նոյն բարենորոգմանց

«օգտու էտ արդեանց կարգէն լինելով, ներշնակ այիշատակ Հան-
 «գուցեղոյն անունն ու յաջողութիւնն այս բարեբաստիկ աւուր մէջ
 «յատկապէս յայտարարելը և զինքն իբրև Պետութեան բարերար
 «յիշատակելը: Թանգիմաթին հաստատութեան միջոցը եթէ ժա-
 «մանակիս ընդունակութեանն ու պահանջմանցը համաձայն լինէր,
 «այսօր մեր հրատարակած Հիմնական կանոնին (Սահմանադրու-
 «թիւն) տրամադրութիւնքն երջանկայիշատակ Հանդուցեղոյն այն
 «ատեն հաստատած և գործադրած ըլլալուն բնաւ տարակոյս
 «չէր մնար:»

«Սակայն Նախահանամութիւնը՝ մեր Ազգին կատարեալ եր-
 «ջանկութիւնը բովանդակող այսպիսի մի բարեպատեհ վախճանն
 «մեր թագակալութեան ժամանակին պահած ըլլալով, այս դիպ-
 «ման մասին Բարձրեղոյն խորին գոհութիւն և շնորհակալութիւն
 «կը մատուցանեմ:»

«Ըստ որում մեր Պետութեան ներքին կացութեան մէջ բնակա-
 «նաբար տեղի ունեցած փոփոխութեանց և արտաքին յարաբերու-
 «թեանց մասին յառաջ եկած ընդարձակմանց պատճառաւ կատա-
 «վարութեան ձեւին անբաւականութիւնը ծայրայեղ աստիճանի
 «հասած է, և մեր բարձր դիտաւորութիւնքն են՝ երկրին և ազգին
 «փերեանց ընական հարստութենէ՞ ու ընածիր կարողութենէ մինչև
 «դարդ օրինաւորապէս օգուտ քաղելուն արդելք դարձած պատ-
 «ճառներուն բարձմանը համայն հպատակաց յառաջադիմու-
 «թեան շարունակ մէջ միաբանութեամբ և փոխադարձ աջակցու-
 «թեամբ ևս քան զևս զարդանալու բարեկալատակ սկզբունքն, այս
 «կէտադրեալ նպատակին ժամանելու համար կառավարական
 «ուղիք և կանոնաւոր եղանակ մի ձեռք առնուլ հարկ եղաւ:»

«Ըստ որում կառավարական իշխանութեան օրինադրեալ և
 «որոշեալ իրաւասութիւններն պահելով, ապօրէն ընթացքներէ՝
 «այն է, միակ Անձի մը կամ սակաւաթիւ Անձանց միապետական
 «իշխանութենէն յառաջ դարձիք սխալմանց կամ զեղծմանց ար-
 «գելմանն ու բարձմանն յատուկ, և մեր ազգային գոյութիւնը
 «կերպաւորող տարասեռ ազգաց մի քաղաքակիրթ հաւաքական
 «նախնայ արժանաւայել իրաւունքն ու շահն է՝ որ ամենուն ա-
 «ղատութեան, արդարութեան և հաւասարութեան շնորհէն
 «անխախտ օգտիլ կարտադրէ, ահա այս օգուտներն ապահովելու
 «և որոշելու, և այս առաջադրութիւններն իրականացնելու հա-
 «մար ընդ հանուր կանոններն ու գործերը Սահմանադրականու-
 «թեան (մէջրութիւնէթ) և խորհրդակցութեան (մէջվէրէթ) բա-
 «նաւոր եղանակին հետ լծորդելու օգտակար ու անխրէպ միջոցն

«հարկ ըլլալով, Բնդհանուր ժողովոյ մի կազմութեան պէտքը
 «մեր գահակալութիւնը հրատարակող խաթիթին մէջ յիշատակած
 «ու յայտարարած էինք:»

«Այս մասին խնդրելի Հիմնական կանոնն (Սահմանադր-
 «ութիւն) նախարարաց և կրօնական բարձրաստիճան պաշտօ-
 «նէից և այլ աւագանեաց և պետութեան պաշտօնատեարցմէ
 «բաղկացեալ մասնաւոր ժողովոյ մի մէջ խորհրդակցութեան են-
 «թարկուելով խմբադրուած, և մեր նախարարաց ժողովոյն մէջ ալ
 «ըստ ամենայնի քննուելով հաստատուած է: Այս կանոնագրին
 «բովանդակութիւնն է՝ իրամութեան գերագոյն խալիֆայու-
 «թեան և Օսմանեան կայսերական իշխանութեան իրաւասու-
 «թիւնք, Օսմանցուց աղատութիւնն և հաւասարութիւնք, նախա-
 «բարաց և պաշտօնէից պատասխանատուութիւնն և իրաւասու-
 «թեանց սահմանք, Գանձային հաւասարակշռութեան իրականա-
 «ցումը, դաւառական վարչութեանց կեդրոնական իրաւասու-
 «թիւններն պահելով հանդերձ, արտօնութեանց ընդարձակման
 «(ապակեդրոնացում) եղանակին ընտրութիւնն:»

«Ուստի այս տրամադրութիւններն՝ Շէրի-Շէրիֆի և երկրին
 «ու Ազգին այսօրեայ ընդունակութեան ու պահանջմանց համա-
 «ձայն և ըստ Մերում ջերմ բաղձանաց, հանրական երջանկու-
 «թեան ու յառաջադիմութեան շահաւէտ սկզբանց համակերպ-
 «եալ լինելուն համար, Նախահանամութեան աջակցութեան և
 «Մարդարէին օգնութեանն ապաւինելով՝ սոյն Հիմնական կանո-
 «նը (Սահմանադրութիւն) ընդունելով և վաւերացնելով առ Ձեզ
 «կը յուղարկեմ:»

«Միանդամայն վերջնական կերպիւ կը պահանջեմ՝ որ սոյն
 «Հիմնական կանոնն շնորհիւն Աստուծոյ Օսմանեան երկրին ամեն
 «կողմերը գործադրելի ըլլալու պայմանաւ հրատարակէք, այսօր-
 «ու ընէ սկսեալ նորա տրամադրութեանց կիրառութեան ձեռնար-
 «կէք, և ՚ի նմա յիշատակեալ և որոշեալ կանոններն ու օրէնքները
 «վաղ ընդ փոյթ խմբադրելու և աւարտելու մասին անմիջական և
 «ազգու միջոցներ ձեռք առնուք:»

«Նախահանամոյն Աստուած Մեր երկրին ու Ազգին երջան-
 «կութեանը համար վաստակողաց ջանքերը յաջողութեան ար-
 «ժանի ընէ:»

Տուեալ յ'ութերորդ աւուր Զիլհիճէ ամսոյ 1293 ամին
 Հիճրէթի:

Սոյն կայսերական խաթիւն ընթերցումէն անմիջապէս յետոյ, երբ վեհ. Սուլթանին Սահմանադրութեան փրկաւէտ հրատարակումը թնդանօթներու որոտմամբ կողջուեալէր, բարձր. Մեծ. Եպարքոս՝ Միահաթ փաշայն՝ հետեւեալ ազգու ատենախօսութիւնն ըրաւ ։

«Մեր Օգոստափառ կայսեր Սուլթան Ապտ-իւլ-Համիտ խաթիւն սոյն Հիմնական կանոնին միջոցաւ համայն կայսրութեան հրատարակաց շնորհած նորոգ իրաւունքներն երջանկութեան և «փրկութեան ջահ մ'են, այս այն ջահն է՝ որ այսօրինակ յառաջադիմութեամբք աշխարհի հիացման առիթ տուող եւրոպիոյ «միլիտանոր քաղաքակիրթ Ազգերն տգիտութեան բռնութենէն «ի լոյս հանած է և որ՝ մարդոց իրենց մարդիկ ըլլալնն կուտայցանէ ու կը ճանչցնէ ։

«Մեր Օգոստափառ կայսեր սոյն վսեմ շնորհն ու գթութիւնն՝ Աշխարհի պատմութեան էջերուն մէջ իւր կայսերական հոյակապ անունը որչափ որ երկրին և Պետութեան գոյութեան «Վերսնորոգիւմ և Ազգին Բարեբաւ անուամբ գեղազարդելու «արժանի մեծ գործ մ'է, նոյնչափ ևս մի և նոյն երկրի և մի և նոյն «վեհապետին հրամանին ու իշխանութեան ներքեւ կենակցող և «այսօր կատարեալ միաբանութեամբ և ապահովութեամբ ստուգելու իրաւանց և ազատութեան արժանացող Օսմանեան հպատակաց մշտնջենաւոր երջանկութեան մասին նոր պատմութեան սկիզբ մ'ըլլալով, մեր հայրենակիցք այսպիսի արժանիք «ճանչցող վեհապետի մը Օսմանցի անուամբ արքունի հպատակաց թուոյն մէջ գտնուելնուն նկատմամբ զիրար պէտք է շնորհակալորեն) ։

ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՕՍՄԱՆԵԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿԵԱԼ Ի Վ ԶԻԼՀԻՃՃԷ ԱՄՍՈՅ ԿԳԿ ՏԱՐԻՈՅ ՀԻՃՐԷԹԻ

ԵՒ Ի 11/23 ԳԵԿՏԵՄԲԵՐ ԱՄՍՈՅ 1876 ԱՄԻՆ ՓՐԿՉԱԿԱՆ

ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՑԱՐՈՒԹԻՒՆ

ՅՕԳՈՒԱԾ Ա. — Օսմանեան կայսրութիւնը կը պարունակէ ներկայ նահանգներն, սեպհականութիւններն և առանձնաշնորհեալ գաւառներն ։

Օսմանեան կայսրութիւնը անբաժանելի զանդուած մի է՝ որոյ և ոչ մի մասը կրնայ բնաւ բաժնուիլ ո՛ր է է պատճառաւ ։

ՅՕԴ. Բ. — Կ. Պօլիս՝ մայրաքաղաքն է Օսմանեան կայսրութեան ։

Այս քաղաքը բնաւ կայսրութեան միւս գաւառներէն բացառիկ և իրեն յատուկ առանձնաշնորհում մի չ'ունի ։

ՅՕԴ. Գ. — Օսմանեան վեհապետութիւնը՝ որ իսլամութեան գերադոյն ՍԱԼԻՑԱՅՈՒԹԻՒՆԸ կը բովանդակէ յանձն վեհապետին, Օսմանի կայսերազուն տոհմին իշխանաց երկրագունին կը պատկանի, ըստ արամադրութեան առ այս հաստատեալ վազեմի օրինաց ։

ՅՕԴ. Դ. — Նորին վեհափառութիւնը՝ Սուլթանը՝ իբր գերադոյն խալիֆ, Միւսիւլման կրօնից պահապանն է ։

Նա Օսմանեան վեհապետն ու ՓԱՏԻՇԱՀՆ է ։

ՅՕԴ. Ե. — Ն. վեհ. Սուլթանն անպատասխանատու է և իր Անձը՝ սրբազան ։

ՅՕԴ. Զ. — Օսմանեան կայսերազուն տոհմին անդամոց ազատութիւնը, իրենց անձնական ինչքն, չարժուն կամ անշարժ, իրենց բոլոր կենաց մէջ ունեցած անձնական թոշակը, ընդհանուր երաշխաւորութեան ներքեւ են ։

ՅՕԴ. Է. — Նորին վեհափառութեան Սուլթանին՝ վեհապետական իրաւանց մէջ կը բովանդակին յետագայ առանձնաշնորհումները ։

Նա կ'անուանէ և սրտչտօնանկ կ'ընէ նախարարները, Նա կը շնորհէ պաշտօնական աստիճանները, պաշտօնները և պատուոյ նշանները, Նա կը շնորհէ առանձնաշնորհեալ դաւառաց պետերուն իշխանութեան տիրոջօրը, համաձայն այն պայմաններուն որք արդէն իրենց տրուած առանձնաշնորհմամբ որոշեալ են : Գրամ կ'ոխել կ'ուտայ, իր անունը կը յիշատակուի մըզկիթներուն մէջ հասարակաց աղօթքներու միջոցին, Տէրութեանց հետ դաշնագրութիւններ կը կնքէ, պատերազմ կը հրատարակէ, խաղաղութիւն կ'ընէ, գերագոյն հրամանատարն է ցամաքային և ծովային բանակաց, զինուորական շարժումները կը հրամայէ, Շէրիի (նուիրական օրինաց) և այլ օրինաց տրամադրութիւնքը ՚ի կիր առնել կ'ուտայ, հասարակաց վարչութեան կանոնները կը յօրինէ, կը ներէ կամ կ'ամօրէ եղեռնադատ ատեաններու վճռած պատիժները, կը գումարէ կամ կը դադրեցնէ ընդհանուր ժողովը, կը լուծէ, եթէ կարեւոր դատի, Երեւոյնի անաց ժողովը, միայն երեսփոխանաց վերընտրութեանը ձեռնարկելու պայմանաւ :

ՕՍՄԱՆՅՈՑ ՀԱՍԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ

ՅՕԳ. Ը. — Կայսրութեան համայն հպատակք անխախտ Օսմանցի կը կոչուին, ինչ որ ալ ըլլայ իրենց պաշտած կրօնքը :

Օսմանցիութեան սեպհական իրաւունքը կ'ստացուի կամ կը կորսուի օրինաց գծած պարագայից համաձայն :

ՅՕԳ. Թ. — Համայն Օսմանցիք անհատական ազատութիւն կը վայելեն, սակայն ուրիշին ազատութեան չը վնասելու թէութեամբ :

ՅՕԳ. Ժ. — Մնհատական ազատութիւնը բացարձակապէս անբռնարարելի է :

Ոչ ոք ս և է պարտուակաւ ս և է պատիժ չը կրեր, միայն օրինաց որոշած պարագայից մէջ և նորա նշանակած եղանակաց համաձայն :

ՅՕԳ. ԺԱ. — Իսլամութիւնը Տէրութեան կրօնքն է :

Տէրութիւնը՝ այս սկզբունքը պահելով հանդերձ, կը պահպանէ կայսրութեան մէջ ծանուցեալ համայն կրօնից ազատ կիրառութիւնը և այլ և այլ հասարակութեանց շնորհեալ կրօնական առանձնաշնորհութիւնները, սակայն հասարակաց անդորրութեան կամ բարոյականութեան վնասարեւ չըլլալու պայմանաւ :

ՅՕԳ. ԺԲ. — Մամուլը ազատ է օրինաց գծած սահմանաց մէջ :

ՅՕԳ. ԺԳ. — Օսմանցիք արտօնութիւն ունին վաճառականական, արուեստական կամ երկրագործական ընկերակցութիւններ կազմելու օրինաց և կանոնաց որոշած սահմաններուն մէջ :

ՅՕԳ. ԺԴ. — Օսմանեան ազգայնութեան վերարեւելալ մի կամ բազմութիւ անձինք իրաւունք ունին խնդրագիրներ մատուցանելու առ ձեռնհաս իշխանութիւնս՝ օրինաց կամ կանոնաց այն զանցառութեանց նկատմամբ, որք գործուած են ի վնաս իրենց անձանց կամ ի վնաս հասարակաց օգտին, ինչպէս նաև կրնան իբրև խնդրագիր՝ գանդատագիրներ մատուցանել առ Օսմ. ընդհ. ժողովը, Տէրութեան պաշտօնատեսարց կամ գործակալաց ընթացքին դէմ արտունջ բառնարու համար :

ՅՕԳ. ԺԵ. — Ուսուցումը ազատ է : Մնձնիւր Օսմանցի կրնայ կըլթութեան հասարակաց կամ մասնաւոր ընթացքներով ուսուցանել, օրինաց տրամադրութեան համակերպելու պայմանաւ :

ՅՕԳ. ԺԶ. — Համայն վարժարանք Տէրութեան հսկողութեան ներքև են :

Համայն Օսմանցուց աւանդելի կըլթութիւնը միօրինակ և կանոնաւոր եղանակի մը վերածելու համար յատուկ միջոցներ պիտի սահմանուին, սակայն այլ և այլ հասարակութեանց կրօնական դատարարակութեանը բնաւ միջամտութիւն չը պիտի լինի :

ՅՕԳ. ԺԷ. — Համայն Օսմանցիք հաւատար են առաջի օրինաց : Միւսնայն իրաւունքներն ու պարտիքն ունին առ երկիրն, սակայն առանց կրօնից և նորա ստորոգելեաց վնաս առթելու :

ՅՕԳ. ԺԸ. — Հասարակաց պաշտօններու ընդունելութեան պայմանն է հմտութիւն Թուրքերէնի՝ որ Տէրութեան պաշտօնական լեզուն է :

ՅՕԳ. ԺԹ. — Համայն Օսմանցիք հասարակաց պաշտօններու մէջ կ'ընդունուին ըստ ընդունակութեան, արժանեաց և կարողութեան իւրեանց :

ՅՕԳ. Ի. — Տուրքերը կը սահմանուին ու կը բաշխուին ըստ հաստատեալ մասնաւոր օրինաց և կանոնաց, և ըստ քանակութեան ընչից անձնիւր հարկավճարին :

ՅՕԳ. ԻԱ. — Կանոնաւորապէս հաստատեալ անշարժ և շարժուն ստացուածքն երաշխաւորեալ է :

Ստացուածոց գրաւումն տեղի կրնայ ունենալ միայն այն ատեն՝ երբ նորա պէտքը հարկադրապէս հաստատեալ է հասարակաց օգտին համար, և այս պարագային մէջ՝ ըստ տրամադրութեան օրինաց՝ գրաւելի անշարժ ստացուածոց արժէքին հաւասար հատուցումն կը լինի :

ՅՕԴ. ԻԲ. — Բնակարանը կամ օթեւանը անբռնաբարելի է ։
Իշխանութիւնը չէ կարող բռնի մտնել ո՛ր և է մէկու մը բնա-
կարանը , բայց միայն այն պարագայից մէջ՝ զորս օրէնք կը տը-
րամադրեն ։

ՅՕԴ. ԻԳ. — Ոչ ոք կրնայ բռնադատուիլ ձեռնհաս դատաս-
տանէն զատ ո՛ր և է դատարանի մը առջեւ ներկայանալու ՚ի դա-
տատան , ըստ սրամադրութեան հրատարակելի դատավարա-
կան օրինաց՝ (լուս տը բռօսէտիւռ) ։

ՅՕԴ. ԻԴ. — Ընչից յարքունիս դրաւումը (բօնֆիւքասիօն) ,
տարապարհակ աշխատութիւնը և Ֆէրֆօ (հարկահանութիւն մի
գրամական պատժոյ ձեւով) արգիլեալ են ։

Պատերազմի ժամանակ օրինաւորապէս հաւաքեալ տուրքերն
և պատերազմական վիճակէն հարկադրեալ միջոցներն այս տրա-
մադրութենէն բացառիկ են ։

ՅՕԴ. ԻԵ. — Ո և է դրամայ դումար մի չը կրնար պահանջուիլ՝
յանուն տրոց կամ մաքսատրոց (թաքս) կամ այլ անուամբ , բայց
եթէ միջօրինաց տրամադրութեանն համաձայն ։

ՅՕԴ. ԻԶ. — Տանջանքն ու խոչտանգանքը՝ իրենց ամենայն
ձեւերով՝ ամբողջովին և բացարձակապէս արգիլեալ են ։

ՆԱԽԱՐԱՐՔ

ՅՕԴ. ԻԷ. — Վեհ. Սուլթանը Մեծ. Եպարքոսութեան և
Շէյխ-Իւլ-Իսլամութեան իշխանութիւն կ'ուտայ այն անձանց՝
զորս իւր բարձր վստահութիւնը արժան կը դատէ ։

Այլ նախարարաց անուանումը կայսերական իրատէով (հրա-
ման) տեղի կ'ունենայ ։

ՅՕԴ. ԻԸ. — Նախարարաց ժողովը կը գումարի ընդ նախա-
դահութեամբ Մեծ-Եպարքոսին ։

Նախարարաց ժողովոյն իրաւասութիւնքն են՝ Պետութեան ,
ներքին կամ արտաքին , համայն կարեւոր գործերն ։

Իւր խորհրդակցութիւնք՝ որ ն. վեհախառութեան՝ Սուլ-
թանին՝ վաւերացմանը կ'ենթարկին , կայսերական իրատէով
գործադրելի կ'ըլլան ։

ՅՕԴ. ԻԹ. — Սնձնիւր նախարարական ճիւղի պետն՝ իւր
իրաւասութեանց սահմանին մէջ , կը տնօրինէ այն գործերն՝
որք իւր ճիւղին իշխանութեան ներքեւ կ'իյնան ։

Այս սահմանէն անդին անցնող գործերն Մեծ-Եպարքոսին
կը յղէ ։ Մեծ-Եպարքոսը տնօրինութիւն կ'ընէ այն տեղեկա-

գրոց նկատ նամբ՝ որք առ ինքն կ'ուղղուին այլ և այլ ճիւղե-
րու պետերու կողմանէ , թէ՛ զանոնք յղելով , եթէ հարկ է , առ-
ժողովն նախարարաց և ապա զանոնք կայսերական հաւանու-
թեան ներկայացնելով , և թէ հակառակ պարագային մէջ , ինք-
նին տնօրինելով , կամ զանոնք վեհ. Սուլթանին որոշմանը
յանձնելով ։

Ուրոյն կանոնագիր մի գործոց այս զանազան դասակարգու-
թիւնքը պիտի որոշէ անձնիւր նախարարական ճիւղին համար ։

ՅՕԴ. Լ. — Նախարարք պատասխանատու են իրենց վարչու-
թեան գործոց կամ գործառնութեանց նկատմամբ ։

ՅՕԴ. ԼԱ. — Եթէ Երեսփոխանաց ժողովոյն մի կամ բազում
անդամք ուղեն տրտունջ բառնալ նախարարի մը դէմ , իւր պա-
տասխանատուութեանը նկատմամբ կամ այն գործոց առթիւ՝
որոց վրայ յիշեալ ժողովը հեղինակութիւն ունի , գանգատագիրը
նախագահին կը յանձնուի , որ երեք օրուան մէջ կը յղէ զայն այն
դիւանին՝ որ ըստ սրամադրութեան ներքին կանոնագրին , պաշ-
տօն ունի ՚ի քննին առնուլ գանգատը և նորա յիշեալ ժողովոյն
վիջարանութեանց ենթարկումը որոշել , եթէ տեղի ունի ։

Սոյն դիւանին որոշումը ձայնից մեծամասնութեամբ տեղի
կ'ունենայ , սակայն այն ատեն՝ երբ կարեւոր տեղեկութիւնք առ-
նուած են և խնդրոյ առարկայ եղող նախարարին կողմանէ բա-
ցատրութիւնք արուած ։

Եթէ դիւանը սրամադիր է գանգատը յիշեալ ժողովոյն
յանձնելու , սոյն որոշումը հաստատող տեղեկագիրը կը կար-
գացուի հրապարակային նստին մէջ և ժողովը՝ գատելի նախա-
րարին՝ որ սոյն նստին ներկայ գտնուելու կոչեալ է , կամ իւր
ներկայացուցչին բացատրութիւնները լսելէ յետոյ , ձայնից երկու-
երրորդի բացարձակ մեծամասնութեամբ տեղեկագրին եզրա-
կացութիւնք կը քուէարկէ ։

Երբ սոյն եզրակացութիւնք ընդունուին , նոյն նախարարին
դատաստանի ենթարկումը խնդրող գիր մը կը յանձնուի Մեծ-
Եպարքոսին՝ որ զայն վեհ. Սուլթանին վաւերացմանը կը
մատուցանէ , և ապա կայսերական իրատէի մը տրամադրու-
թեան համաձայն կը յղէ առ Գերագոյն Ատեանն ։

ՅՕԴ. ԼԲ. — Ուրոյն օրէնք մի նախարարաց դատման մասին
կիրարկանելի դատավարութիւնը (բռօսէտիւռ) պիտի որոշէ ։

ՅՕԴ. ԼԳ. — Նախարարաց և սոսկական անհատից մէջ բնաւ
տարբերութիւն չ'կայ այն դատաստանաց մասին՝ որոնք մասնա-
ւոր են կամ անհատական և իրենց պաշտամանց սահմանէն դուրս ։

Այս կարգի դատաստանք հասարակաց դատաստանական իշխու-
նութեան կը յղուին :

ՅՕԳ. 1Գ. — Այն նախարարը՝ որոյ դատաստանի ենթարկու-
մը վճռեալ է գերագոյն Ասենին Ամբաստանութեան ժողովէն ,
իւր պաշտօնէն կտօնակցեալ է , մինչեւ որ իրեն դէմ եղած ամ-
բատանութենէն ղերծանի :

ՅՕԳ. 1Ե. — Երբ Երեւոյնի սահմանաց ժողովոյն մի պատճառա-
բանեալ քուէովն մերժուի օրինաց ծրագիր մի՝ որոյ ընդունե-
լութեանն համար նախարարութիւնը պնդել կ'ուզէ , Վեհ.
Սուրբանը՝ իւր վեհապետական իրաւասութիւնը ՚ի կիր ար-
կանելով , կը հրամայէ կամ նախարարութեան փոփոխութիւնը և
կամ Երեւոյնի ժողովոյն լուծումը , օրինաց որոշած պայմանաժա-
մու միջոցին Երեւոյնի վերստին ընտրուելու պայմանու :

ՅՕԳ. 1Զ. — Ի պահանջել ստիպողական հարկին՝ եթէ Ընդ-
հանուր ժողովը չը դումարիր , նախարարութիւնը կրնայ Տէրու-
թիւնը մտաւորաւ վտանդի մը դէմ զգուշացնելու կամ հասարա-
կաց անդորրութիւնը պահպանելու տեսութեան յատուկ տրու-
մագրութիւններ ձեռք առնուլ :

Այս տրամադրութիւնը՝ կայսերական իրատէսով վաւերաց-
եալ , առժամանակեայ կերպիւ օրինաց ուժ ունին , եթէ Սահմա-
նագրութեան հակընդդէմ չ'են :

Ասոնք հարկ է որ Ընդհանուր ժողովոյն յանձնուին , երբ
դումարի :

ՅՕԳ. 1Է. — Անձնիւր նախարար իրաւունք ունի Երեւոյնի տի
կամ Երեւոյնի սահմանաց ժողովոյն նիստերուն ներկայ դանուելու կամ
իւր ճիւղին մի գերագոյն պաշտօնակալը իւր կողմանէ ներկա-
յացուցիչ կարգելու :

Նոյնպէս իրաւունք ունի լսելի լինելու՝ ժողովոյն լոսուք խնդ-
րող ամեն անդամէն յառաջ :

ՅՕԳ. 1Ը. — Երբ ձայնից առաւելութեամբ տրուած մի որո-
շումէ յետոյ , նախարար մի հրաւիրեալ է Երեւոյնի սահմանաց ժողո-
վոյն երթալ բացատրութիւններ տալու համար , պարտաւոր է
առ ինքն ուղղեալ հարցմանց պատասխանել անձամբ ներկայա-
նալով կամ իւր ճիւղին մի գերագոյն պաշտօնակալն ներկայա-
ցուցիչ կարգելով :

Այսու ամենայնիւ իրաւունք ունի իւր պատասխանը յետա-
ձրդելու , եթէ հարկ դատի , այս յետաձգման պատասխանա-
տուութիւնը ստանձնելով :

ՀԱՍԱՐԱԿԱՅ ՊԱՇՏՈՆԵԱՅՔ

ՅՕԳ. 1Թ. — Այլ և այլ հասարակաց պաշտօններու անուա-
նութեան տեղի կունենան ըստ տրամադրութեան այն կանոնաց՝
որք տէրութեան պաշտօններու մէջ ընդունուելու համար պահա-
ջուած արժանեաց ու կարողութեան թէ ու թիւնները կարողն :

Այս պայմաններով անուանեալ ամեն պաշտօնեայ չը պիտի
կրնայ պաշտօնանկ լինել կամ փոփոխիլ , եթէ չէ ապացուցեալ
որ իւր ընթացքը օրինաւորապէս իւր պաշտօնանկութիւնը չ'ար-
դարացներ , եթէ ինք հրաժարական տուած չ'է կամ եթէ իւր
պաշտօնանկութիւնը անհրաժեշտ դատուած չ'է կառավարու-
թեան կողմանէ :

Այն պաշտօնեայք՝ որ բարւոք ընթացից և համեստութեան
ապացոյց տուած են յանձին , ինչպէս նաև անոնք՝ որոյ հան-
դրատեան ենթարկումը (միզ ան տխրօնիւրիլթէ) անհրաժեշտ
դատուած է կառավարութեան կողմէն , իրաւունք պիտի ու-
նենան թէ յառաջացման , թէ դադարման թոշակի , և թէ հան-
դրատեան ամսականի , ըստ տրամադրութեան առ այս հաստա-
տելի յատուկ կանոնադրին :

ՅՕԳ. 1Թ. — Զանազան պաշտօնանց իրաւասութիւնք որոյն
կանոնադրներու միջոցաւ պիտի որոշուին :

Անձնիւր պաշտօնեայ պատասխանատու է իր իրաւասու-
թեանց սահմանին մէջ :

ՅՕԳ. 1Թ. — Ամեն պաշտօնեայ պարտաւոր է յարգել իւր
դիւխաւորը , սակայն հնազանդութիւն կը պարտի միայն այն հը-
րամանաց՝ որոնք օրինաց դժած սահմաններուն մէջ տրուած են :

Օրինաց հակընդդէմ գործոց մասին դիւխաւորի մը հնազան-
դած ըլլալու պարագայն չը կրնար պաշտօնէին պատասխանա-
տուութիւնը բառնալ :

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ՅՕԳ. 1Թ. — Ընդհանուր ժողովը կը բաղկանայ երկու ժո-
ղովներէ , Առաջաժողով կամ Երեւոյնի սահմանաց ժողով :

ՅՕԳ. 1Թ. — Այս երկու ժողովները կը դումարին իւրաքան-
չիւր տարւոյ նոյնիւր ամսոյ սկիզբը : Բացումը կայսերական ի-
րատէսով տեղի կ'ունենայ :

Նոյնպէս փակումը՝ որ յաջորդ մարտ ամսոյ սկիզբը ըլլալ ո-
րոշուած է , կայսերական իրատէսով մը կ'ըլլայ :

Այս երկու ժողովոց և ոչ մին չը կրնար դումարուիլ միս ժողովոյն գումարման ժամանակէն տարբեր տուն մը :

ՅՕԳ. ԽԳ. — Վեհ. Սուլթանը կրնայ, ըստ պահանջման պարագայից, բացման ժամանակը կանխել և դումարման միջոցը կարճել կամ երկարել :

ՅՕԳ. ԽԵ. — Բացման հանգէոր տեղի կ'ունենայ 'ի ներկայութեան վեհ. Սուլթանին, անձամբ կամ Մեծ Եպարքոսին փոխանորդութեամբ ներկայացեալ և 'ի ներկայութեան նախարարաց և երկու ժողովոց անդամներուն :

Կայսերական ատենախօսութիւն մի կը կարգացուի, որ անցեալ տարւոյն մէջ կայսրութեան ունեցած ներքին կացութիւնը և իր արտաքին յարաբերութեանց վիճակը կը նկարագրէ և կը յայտարարէ այն միջոցները որոց ընդունելութիւնը հարկաւոր դատուած է յաջորդ տարւոյն համար :

ՅՕԳ. ԽԶ. — Ընդհանուր ժողովոյ համայն անդամք կ'երդնուն հաւատարիմ մնալ առ վեհ. Սուլթանն և առ Հայրենիս, պահպանել զՍահմանադրութիւն, իրենց տւանդեալ պաշտօնը ընդ և այս պարտականութեանց հակառակ ամեն գործերէ խորշիլ :

Նորընտիր անդամոց երդմնադրութիւնը տեղի կ'ունենայ տարեկան գումարման բացման միջոցին, 'ի ներկայութեան Մեծ-Եպարքոսին և յետ բացման, 'ի ներկայութեան իրենց յատուկ նախագահաց և իրենց վերաբերելի ժողովոյն հրապարակային նիստին մէջ :

ՅՕԳ. ԽԷ. Ընդհ. ժողովոյ անդամք ազատ են իրենց կարծեաց կամ քուէից արտայայտութեան մէջ :

Անոնցմէ ոչ ոք կրնայ կաշկանդուիլ հրահանգներով կամ խոստումներով և ոչ ալ ներդործուիլ սպաննալեօք :

Նոյնպէս իրեն պատկանեալ ժողովոյն վիճարանութեան ընթացից մէջ արտայայտած կարծեացն կամ քուէիցն համար չը կրնար ամբաստանուիլ, եթէ նոյն ժողովոյն ներքին կանոնադրին հակառակ վարուած չէ. այս պարագային մէջ կանոնին տրամադրութիւնքն ըստ ամենայնի կը գործադրուին իւր վրայ :

ՅՕԳ. ԽԸ. — Ընդհ. ժողովոյ ամեն անդամ՝ որ իրեն պատկանեալ ժողովոյն ձայնից երկու երրորդի բացարձակ մեծամասնութեամբ ամբաստանեալ է մատնութեամբ, Սահմանադրութիւնը բռնաբարելու փորձով կամ նուստ շահախնդրութեամբ (երթիքեաց) ինչպէս նաև այն անդամը՝ որ օրինաւորապէս բանտարկութեան կամ աքորման դատապարտութիւն ընդունած է,

Ծերակուտի անդամակցութեան կամ երեսփոխանութեան հանդամանքէն անկեալ է :

Դատավճիռն ու պատժոյն դործադրութիւնը ձեռնհաս դատարանին կը պատկանին :

ՅՕԳ. ԽԹ. — Ընդհ. ժողովոյ անձնիւր անդամ՝ իւր քուէն անձամբ կուտայ և իրաւունք սննի նաև քուէարկութեան վայրկենին բացակայ դանուելու :

ՅՕԳ. Ծ. — Ոչ ոք կրնայ միանգամայն երկու ժողովոց ալ անդամակից ըլլալ :

ՅՕԳ. ԾԱ. — Խորհրդակցութիւն չ'կրնար տեղի ունենալ, երկու ժողովոց մէջ ալ, եթէ ժողովոյն անդամոց կէսէն մէկ աւելին ներկայ չը գտնուի :

Ի բաց առեալ այն պարագաներն՝ յորս երկու երրորդի մեծամասնութիւն կը պահանջուի, ամեն որոշում՝ ներկայ անդամոց քուէի բացարձակ առաւելութեամբը կը տրուի : Երբ քուէներն հաւասար ըլլան, նախագահին ձայնը կրկին է :

ՅՕԳ. ԾԲ. — Անհատական կամ մասնաւոր շահուց վերաբերեալ և երկու ժողովոց միոյն մատուցեալ ամեն խնդրադիր կը մերժուի՝ եթէ անդի ունեցած խօզարկութեանց հետեւութեամբ հաստատուած ըլլայ, թէ խնդրակուն նախապէս չէ գիմած իւր խնդրադրոյն պարունակած հասարակաց պաշտօնէից կամ այն իշխանութեան՝ ուստի կախումն ունին այդ պաշտօնեայք :

ՅՕԳ. ԾԳ. — Նոր օրէնքի մը առաջարկութեան կամ տիրող օրէնքի մը բարեփոխութեան ձեռնբեցութիւնը Նախարարութեան կը պատկանի :

Ծերակոյտը և երեսփ. ժողովը կրնան նորահաստատ օրէնքի մը կամ տիրող օրէնքի մը բարեփոխումն առաջարկել իրենց իրաւասութեանց վերաբերեալ նիւթոց նկատմամբ :

Այս վերջին պարագային մէջ՝ ի նդիրը Մեծ. Եպարքոսին միջոցաւ վեհ. Սուլթանին կը մատուցուի և եթէ, հարկ տեսնուի, Պետական Խորհուրդը կայսերական իրատէով մը պաշտօն կառնու՝ ձեռնհաս ճիւղերուն տուած տեղեկութիւններէն և բացատրութիւններէն յետոյ նոյն առաջարկութեան առարկայ եղող օրինաց ծրագիրը պատրաստելու :

ՅՕԳ. ԾԴ. — Պետական Խորհուրդոյն միջոցաւ պատրաստուած օրինաց ծրագիրը նախապէս Երեսփոխանաց ժողովոյն և ապա Ծերակուտին կը յանձնուին :

Այս ծրագիրներն այն ատեն օրինաց ուժ ունին, երբ երկու

ժողովներէն ալ ընդունուելէն ետքը , կայսերական իրատէով կը վաւերանան :

Ամեն օրինաց ծրագիր՝ որ երկու ժողովոց միոյն կողմանէ վերջնապէս մերժուած է , չը կրնար նոյն տարեկան գումարման շրջանին մէջ նոր վիճարանութեան մ'ենթարկուիլ :

ՅՕԳ. ԾԵ. — Օրինաց ծրագիր մը իբրև ընդունուած չը նըկատուիր , եթէ յաջորդաբար երեսօփոխանաց ժողովէն և Երեւան կուսէն ձայնից առաւելութեամբ քուէարկեալ չ'է յօդուած առ յօդուած , և եթէ ծրագրին բովանդակութիւնը երկու ժողովոց իւրաքանչիւրին մէջ ձայնից առաւելութիւն չահած չէ :

ՅՕԳ. ԾԶ. — Բաց ի նախարարներէն , իրենց ներկայացուցիչներէն և մասնաւոր հրաւիրանօք գումարեալ պաշտօնեայներէ , ոչ ոք կրնայ ներս մտնալ , երկու ժողովոց մէջ ալ , և ոչ ալ կըրնայ ընդունուիլ ո՛ր և է զեկուցում մի (գօմնիւնիդասիօն) ընելու , թէ յանուն իւր ներկայանայ և թէ իբր ներկայացուցիչ խումբ մը անհատից :

ՅՕԳ. ԾԷ. — Ժողովոց վիճարանութիւնները թրքերէն լեզուաւ կըլլան :

Ծրագիրք կը սպաղրուին և կը ցրուին խորհրդակցութեան որոշեալ օրուրնէ յառաջ :

ՅՕԳ. ԾԸ. — Բուէները կը սրուին անուանական կոչմամբ , արտաքին արտայայտութեան նշաններով կամ գաղտնի քուէարկութեամբ :

Գաղտնի եղանակաւ քուէարկութիւնը ներկայ անդամոց մեծագոյն մասին որոշումէն կախումն ունի :

ՅՕԳ. ԾԹ. — Իւրաքանչիւր ժողովոյ կանոնադաւանութեան հըս կողմութիւնը՝ իւր նախագահին կը պատկանի :

ԾԵՐԱԿՈՅՏ

ՅՕԳ. Կ. — Երեւանի նախագահն ու անդամք ուղղակի վէհ. Սուլթանին կողմէն կ'ընտրուին :

Երեւանի անդամոց թիւը երեսօփ. ժողովոյ անդամոց մէկ երրորդ մասէն աւելի չ'կրնար ըլլալ :

ՅՕԳ. ԿԱ. — Երեւանի անդամ ընտրուելու համար պէտք է՝ իւր գործերով հասարակաց վստահութեան արժանացած կամ Պետութեան նշանաւոր ծառայութիւններ մատուցած ըլլալ և առ նուազն 40 տարեկան ըլլալ :

ՅՕԳ. ԿԲ. — Երեւանի անդամք ցիւանս կ'ընտրուին :

Երեւանի անդամակցութեան պաշտօն կրնայ տրուիլ ՚ի հանդիստ գտնուող անձանց՝ որք նախարարի , ընդհանուր կուսակալի (վալի) , Զորաբանակի հրամանատարութեան , Գաղտնիքի (մեծ գատաուր) , Գետաբանի կամ լիազօր պաշտօնէի , Պատրիարքի , իսլամ Պաշիի (բարունապետ) պաշտօն վարած են , նոյնպէս ցամաքային և ծովային զորաբաժնի հրամանատարաց և ընդհանրապէս այն անձանց՝ որք պահանջելի հանգամանքներն ունին :

Երեւանի անդամք եթէ , ըստ իրենց խնդրանաց , այլ պաշտօններու կոչուին , իրենց ծերակուտի անդամակցութեան հանդամանքը կը կորսնցնեն :

ՅՕԳ. ԿԳ. — Երեւանի անդամակցութեան թոշակը ամսական տասը հազար գահեկան ըլլալ որոշեալ է :

Այն ծերակուտի անդամք՝ որ ուրիշ անուամբ մը Գանձէն թոշակ մը կամ ուճիւրներ կ'ստանայ , միայն ամբողջին իրաւունք ունի , եթէ անոնց համագումարը առօր հազար գահեկանէն նուազ է :

Եթէ նոյն քանակութիւնը Երեւանի անդամակցութեան թոշակին հաւասար կամ անկէ առաւել է , կը շարունակէ համագումարը ընդունելու :

ՅՕԳ. ԿԴ. — Երեւանի տը ի քննին կ'առնու երեսօփ. ժողովոյն կողմանէ առ ինքն յղեալ օրինաց կամ պիւտճէի ծրագիրները :

Եթէ օրինաց ծրագրի մը քննութեան միջոցին՝ Երեւանի տը , վէհ. Սուլթանին վեհապետական իրաւանց , աղատութեան , երկրին ներքին ապահովութեան , հայրենեաց պաշտպանութեան օգտին կամ բարոյականութեան հակառակ տրամադրութիւն մի նշմարէ , զայն պատճառաբանեալ քուէով մը վերջնապէս կը մերժէ կամ կը վերայդէ՝ իւր դիտողութեանց հետ , առ երեսօփ. ժողովը , խնդրելով որ սոյն դիտողութեանց իմաստին համաձայն ուղղուի կամ բարեփոխուի :

Երեւանի կողմանէ ընդունուած օրինաց ծրագիրները իւր հաւանութեամբ կը վաւերացուին և կը յանձնուին Մեծ. Եպարքոսին :

Երեւանի տը ՚ի քննին կ'առնու առ ինքն ներկայացեալ խնդրագիրները . այս խնդրագիրներէն արժան գատածներն՝ Մեծ. Եպարքոսին կը յուղարկէ , հետը կցելով նաեւ իւր դիտողութիւններն :

671-50

ԵՐԵՍՓՈՒՍԱՆՑ ԺՈՂՈՎ

ՅՕԴ. ԿԵ. — Երեւոյն տանաց թիւը՝ Օսմանեան ազգութեան վերաբերեալ ամեն մէկ 50,000 արու անհատից յընդամենը մէկ երեսու փոխանի հաշուով ըլլալ որոշուած է :

ՅՕԴ. ԿԶ. — Ընտրութիւնը գաղտնի քուէարկութեամբ կ'ըլլայ . ընտրութեան եղանակը ուրոյն օրէնքով մը պիտի որոշուի :

ԻՕԴ. ԿԷ. — Երեւոյն տանութեան պաշտօնը չը կրնար միարանիլ հասարակաց պաշտօններու հետ , բաց ՚ի Նախարարութեան պաշտօնէն :

Այլ ամեն հասարակաց պաշտօնեայ՝ որ երեւոյն տան ընտրուի , աղատ է զայն ընդունելու կամ մերժելու . սակայն եթէ ընդունի , իւր միւս պաշտօնը թողելու է :

ՅՕԴ. ԿԸ. — Երեւոյն տան չ'են կրնար ընտրուիլ ,

1. Մնոնք՝ որ Օսմանեան ազգութեան չ'են վերաբերիր :

2. Մնոնք՝ որ ՚ի գործադրութեան գտնուած յատուկ կանոնադրին տրամադրութեան համաձայն իրենց վարած օտար ծառայութեան յարակից ապահարկներ կը վոյելեն :

3. Մնոնք՝ որ թուրքերէն լեզուն չ'են գիտեր :

4. Մնոնք՝ որ երեսուն տարեկան հասակը լրացուցած չ'են :

5. Մասնաւորի մը ծառայութեան յատկացեալ անձինք :

6. Գեռ ևս չը վերահաստատուած (նօն-աւապիլիթէ) սընանկացեալք :

7. Մնոնք՝ որ իրենց յոռի ընթացքով նշանաւորապէս վատթար ճանչցուած են :

8. Այն անհատները՝ որ դատաստանական արգելանաց (էնթէռտիքսիօն ժիւտիսիէո) ենթարկեալ են , քանի որ այս արգելանքը վերցուած չ'է :

9. Մնոնք՝ որ իրենց քաղաքային իրաւունքները չ'են վայելեր :

10. Մնոնք՝ որ կը կարծեն թէ օտար ազգի մը կը վերաբերին :

Առաջին քառամեայ թուականը լրանալէն յետոյ , երեւոյն տանական ընտրելութեան պայմաններէն մին պիտի ըլլայ , թուրքերէն կարգալ և ըստ կարելոյն նոյն լեզուաւ գրելալ գիտնալ :

ՅՕԴ. ԿԹ. Երեւոյն տանաց ընդհանուր ընտրութիւնները ամեն չորս տարին անգամ մը տեղի կ'ունենան :

Մնձնիւր երեւոյն տանի պաշտօնավարութիւնը չորս տարի կը տեւէ , սակայն վերընտրելի է :

ՅՕԴ. Ը. Ընդհանուր ընտրութիւնը առ նուազն չորս ամիս յառաջ կսկսին յաջորդ նոյեմբեր ամսէն՝ որ ժողովոյն գումարման որոշեալ թուականն է :

ՅՕԴ. ԸԱ. — Երեւոյն ժողովոյն իւրաքանչիւր անգամի՝ Օսմանեան հանրութիւնը կը ներկայացնէ և ոչ եթէ մասնաւորաբար գինքն ընտրող նահանգը :

ՅՕԴ. ԸԲ. — Ընտրողը պարտին իրենց բնակած գաւառին բնակիչներէն ընտրել իրենց երեւոյն տանը :

ԼՕԴ. ԸԳ. — Երբ ժողովը կայսերական իրատեով լուծուի , ընդհանուր ընտրութիւնը պէտք է որ հարկ եղած ժամանակին սկսին , որպէս զի ժողովը վերստին կարենայ գումարիլ առ առաւելն լուծման թուականէն վեց ամիս ետքը :

ՅՕԴ. ԸԴ. — Երբ վախճանման , դատաստանական արգելանաց ենթարկման , երկարատե քացակայութեան , դատապարտութեան մը կամ հասարակաց պաշտօններու կարգուած ըլլալուն առթիւ Երեւոյն հանգամանքը կորսնցուցած ըլլալուն պատճառաւ երեւոյն տան մը հրաժարի , յաջորդին ընտրութեան կը ձեռնարկուի , ըստ տրամադրութեան ընտրական օրինաց և այն պիտի միջոցի մը մէջ՝ որ նորընտիր երեւոյն տանը կարենայ իւր պաշտօնը վարել գէթ յաջորդ տարեկան գումարման միջոցին :

ՅՕԴ. ԸԵ. — Թափուր մնացած աթոռ մը լեցնելու համար՝ ընտրեալ երեւոյն տանաց պաշտօնը կը տեւէ մինչև յառաջիկայ ընդհանուր ընտրութիւնը :

ՅՕԴ. ԸԶ. — Իւրաքանչիւր երեւոյն տանի՝ գանձէն ամեն մէկ տարեկան գումարման համար 20,000 դահեկան և միանգամայն գալստեան և վերադարձի ճանապարհի ծախքը կը վճարուի :

Այս ծախսոց քանակութիւնը այն կանոնադրին տրամադրուեան պիտի համակերպի՝ որ Պետութեան քաղաքային պաշտօնէից վճարեալ ուղեւորչէքը կորոշէ և ամսական 5000 դահեկան թոշակի հաշով պիտի ըլլայ :

ՅՕԴ. ԸԷ. — Երեւոյն ժողովոյն Նախագահը և երկու փոխ-Նախագահները վճէ. Սուլթանին կողմանէ կրնարուին , ժողովոյն կողմանէ ձայնից առաւելութեամբ ընտրեալ ինն ընտրելեաց ցուցակի մը վրայէն , և այս ինն ընտրելեաց երեքը՝ Նախագահութեան , երեքը՝ առաջին փոխ-Նախագահութեան և երեքը՝ երկրորդ փոխ-Նախագահութեան համար նշանակեալ են :

Նախագահին և փոխ-Նախագահաց անուանումը կայսերական իրատեով կը ըլլայ :

ՅՕԴ. ԸԸ. — Երեւոյն ժողովոյն նիստերը հրապարակային են :

Սակայն ժողովը կրնայ դռնփակ նիստ ընել, եթէ այս մասին Նախարարներէն կամ Նախագահէն և կամ ԱՅ անդամներէ առաջարկութիւն եղած ըլլայ, և եթէ այս առաջարկութիւնը դռնփակ նիստով քուէարկեալ է:

ՅՕԴ. ՀԹ. — Ոչ ոք Երեսփոխան կրնայ ձերբակալուիլ կամ դատուիլ: միայն այն ատեն կարելի է երբ յանցանքը դործածած միջոցին բռնուած է, և եթէ ժողովը զայն դատելու արածնութիւն տալ որոշած է մեծամասնութեամբ:

ՅՕԴ. Զ. — Երեսփ. ժողովը կը վիճարանի իրեն յանձնուած օրինաց ծրագիրներուն վրայ:

Կ'ընդունի, կը բարեփոխէ կամ կը մերժէ Գանձային վիճակին կամ Սահմանադրութեան վերաբերեալ տրամադրութիւնքը:

Մանրամասնօրէն 'ի քննին կ'առնու Պիւտճէի օրինաց մէջ բոլանդակեալ Պետութեան ընդհանուր ծախքերը և Նախարարաց հետ անոնց քանակութիւնը կ'որոշէ:

Նոյնպէս Նախարարաց հետ համաձայնութեամբ ծախքը հակառակու սահմանեալ մտից բաշխման և արդիւնաւորութեան բնութիւնը, քանակութիւնը և եղանակը կ'որոշէ:

ԳԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՒԻՒՆ

ՅՕԴ. ԶԱ. — Այս մասին յատուկ օրինաց տրամադրութեամբք ընտրեալ և արքունի հրովարտակաւ պատուեալ (սէրաթ) դատաւորներն ցիկանս պաշտօն ունին, սակայն կրնան հրաժարական տալ:

Դատաւորաց՝ իրենց դասակարգութեան մէջ յառաջացումը, պաշտօնի տեղափոխութիւնը, պաշտօնադադարը (թէ գայիւտ), դատաստանական դատապարտութեան մը հետեւութեամբ պաշտօնանկութիւնը մի և նոյն օրինաց տրամադրութեան ենթակայ են:

Այս օրէնքն է՝ որ կ'որոշէ դատաւորի կամ այլ դատաստանական կարգին պաշտօնները վարելու համար պահանջելի թէւթիւններն ու հանգամանքը:

ՅՕԴ. ԶԲ. — Ամեն դատարանաց նիստերը հրապարակային են: Գատա՛վճոց հրատարակումը արտօնեալ է:

Սակայն օրինաց դժած պարագայներուն մէջ՝ դատարանը կրնայ դռնփակ նիստ ընել:

ՅՕԴ. ԶԳ. — Ամեն անհատ կրնայ իւր իրաւանց պաշտպանութեան համար օրէնքէն թոյլատրեալ միջոցներ 'ի կիր արկանել դատարանին առջեւ:

ՅՕԴ. ԶԴ. — Ոչ մի դատարան ս' և է պատրուակաւ կրնայ մերժել դործի մը դատաստանը՝ որ իր ձեռնհասութեանէն կախումն ունի:

Նոյնպէս չ'կրնար անոնց դատա՛վճիւր արդիւնը կամ յետաձգելը, քննութեան կամ նախնական տեղեկութեան ձեռնարկէլէն ետքը, այլ է եթէ դատախաչն իւր դատէն ետ կենայ:

Սակայն, պատժական ճիւղին մէջ, հասարակաց դատա՛վարութիւնը (աքսիօն բիւսլիք) կը շարունակուի ըստ տրամադրութեան օրինաց. նոյն իսկ եթէ դատախաչը իւր դատէն ետ կեցած ալ ըլլայ:

ՅՕԴ. ԶԵ. Իւրաքանչիւր դատ կը դատուի այն դատարանէն որուն իշխանութեան ներքեւ կ'ըլլայ:

Մասնաւորաց և Պետութեան մէջ տեղի ունեցած դատաստաններն հասարակ դատարանաց ձեռնհասութեան կը պատկանին:

ՅՕԴ. ԶԶ. — Դատարանաց մէջ ս' և է միջամտութիւն (էնժէռանս) չը կրնար դործուիլ:

ՅՕԴ. ԶԷ. — Շէնն վերաբերեալ դատերը Շէնն դատարաններէն կը դատուին, ինչպէս նաև քաղաքային դործոց դատաստանը՝ քաղաքային դատարաններուն կը պատկանի:

ՅՕԴ. ԶԸ. — Դատարանաց զանազան դասակարգութիւններն, ձեռնհասութիւնը, իրաւասութիւնները և դատաւորաց դիպուածական շահերը (էմօլիւման) օրէնքներով կարգադրեալ են:

ՅՕԴ. ԶԹ. — Որոշեալ Դատարաններէն դուրս ս' և է անուամբ արտաքոյ կարգի դատարաններ և ոչ ալ մասնաւոր դատեր տեսնելու համար յանձնախումբեր չ'են կրնար հաստատուիլ:

Սակայն իրաւարարութիւն (թաքքին) և Գ-Էւայե (ներկայացուցիչ դատաւոր) կարգումը օրինաց դժած ձեւերով ներդրուին:

ՅՕԴ. Դ. — Դատաւոր մը չը կրնար իր դատաւորակոն պաշտօնին հետ Պետութեան կողմէն վարձատրեալ այլ պաշտօններ ալ ստանձնել:

ՅՕԴ. ԴԱ. — Հասարակաց դատա՛վարութեան պաշտօնը վարելու սահմանեալ կայսերական Գործակալներ (բոօքիւռէօն) պիտի կարգուին:

Իրենց իրաւասութիւնքն ու դասակարգութիւնը օրինօք պիտի որոշուին:

ԳԵՐԱԳՈՅՆ ԱՏԵԱՆ

ՅՕԴ ՂԲ. — Գերագոյն Ատեանը կազմեալ է 30 անդամներէ, որոց տասը՝ Երեւակուտի, տասը՝ Պետական Խորհրդոյ և տասը՝ վճռալինչ և վերաքննութեան ատեաններուն նախագահներէն ու անդամներէն բնարեալ:

Բոլոր անդամներն քուէով կ'որոշուին:

Գերագոյն Ատեանը կը գումարի, երբ հարկ ըլլայ, կայսերական իրատէսով և Երեւակուտի ժողովաւեղին:

Իր իրաւասութիւնքն են դատել՝

Նախարարները,

վճռալինչ Ատենին նախագահն ու անդամները և այլ ամեն անձինք՝ որ ամբաստանեալ են դաւաճանութեամբ ընդդէմ վերահայեալին (չէզ մեծէսթէ) կամ Պետութեան ազատութեան:

ՅՕԴ ՂԳ. — Գերագոյն Ատեանը կը բաղկանայ երկու Ատեաններէ, Ամբաստանութեան ժողով և Գատավճուիչ ժողով:

Ամբաստանութեան ժողովը կազմեալ է Գերագոյն Ատենին անդամաց մէջէն քուէով որոշեալ ինն անդամներէ, և որոց երեքը՝ Երեւակուտի, երեքը՝ Պետական Խորհրդոյ և երեքը՝ վճռալինչ կամ վերաքննութեան Ատեաններուն անդամներէն:

ՅՕԴ ՂԴ. — Ամբաստանութեան ժողովը՝ իւր անդամաց երկու երրորդին ձայնից առաւելութեամբ կ'որոշէ յղել դատ մը առ Գատավճուիչ ժողովը:

Ամբաստանութեան ժողովոյն վերաբերեալ անդամք չեն կըրնար Գատավճուիչ ժողովոյն Խորհրդակցութեանցը մասնակցել:

ՅՕԴ ՂԵ. — Գատավճուիչ ժողովը 24 անդամներէ բաղկացեալ է, որոց եօթը՝ Երեւակուտի, եօթը՝ Պետական Խորհրդոյ և եօթը՝ վճռալինչ կամ վերաքննութեան Ատեաններուն անդամներէն:

Կը վճռէ իւր անդամաց երկու երրորդին ձայնից առաւելութեամբ և արդէն ի գործադրութեան գտնուած օրինաց արամադրութեան համաձայն, այն դատաստանները՝ որ առ ինքն կը յղուին Ամբաստանութեան ժողովին:

Իւր դատավճիռներն ոչ վերաքննութեան և ոչ իսկ վճռալինչման կրնան ենթարկել:

ԳԱՆՁ

ՅՕԴ ՂԶ. — Ի նպաստ Պետութեան սահմանեալ ո՛ր և է տուրք միայն օրինաց արամադրութեամբ կրնայ հաստատուիլ, բաշխուիլ և հաւաքուիլ:

ՅՕԴ ՂԷ. — Պիւտճէն այն օրէնքն է՝ որ կը պարունակէ Պետութեան հասութից և ծախուց կանխորոշումները (բուէվիդիօն):

Ի նպաստ Պետութեան սահմանեալ տուրք թէ՛ հաստատութիւնն, թէ՛ բաշխումն և թէ՛ հաւաքումն այս օրինաց համաձայն կը կարգադրուին:

ՅՕԴ ՂԸ. — Պիւտճէի օրէնքը յօդուած առ յօդուած ընդհ. ժողովոյ կողմանէ ի քննին կ'առնուի և կը քուէարկուի: Հասութից և ծախուց մանրամասնութիւնը բովանդակող յարակից վիճակացոյց պատկերներն ըստ կանոնի որոշեալ օրինակին համաձայն հաստատաներու, Գլուխներու և Յօդուածներու բաժնուած են:

Այս վիճակացոյց պատկերներն Գլուխ առ Գլուխ կը քուէարկուին:

ՅՕԴ ՂԹ. — Պիւտճէի օրինաց ծրագիրը տարեկան գումարման բացումէն անմիջապէս ետքը երեսփ. ժողովոյն կը յանձնուի որպէսզի գործադրութիւնը կարելի ըլլայ իւր պատկանեալ տարւոյն սկիզբէն:

ՅՕԴ ՂՁ. — Պիւտճէն դուրս ո՛ր և է ծախք միայն օրէնքի մը արամադրութեամբ կրնայ Պետութեան մուտքէն վճարուիլ:

ՅՕԴ ՂՁԱ. — Երբ արտաքոյ կարգի պարագայներէ պատճառեալ հարկ մը յառաջ դայ՝ Նախարարը կրնան, ՚ի բացակացութեան ընդհ. ժողովոյն, կայսերական իրատէսով եկամտից կարելորդ արբիւրներ հայթայթել և Պիւտճէն դուրս ոչ կանխորոշեալ (նօն բուէվիւ) ծախք մը յաւելուլ, սակայն օրինաց ծրագրով մի ընդհ. ժողովոյ հաճութիւնը առնելով, նոյա մերձակայցոյն գումարման սկիզբը:

ՅՕԴ ՂՁԲ. — Պիւտճէն տարւոյ մը համար կը քուէարկուի և միայն սահմանեալ տարւոյն համար օրինաց ուժ ունի:

Սակայն եթէ՛ բացառիկ պարագայներէ յետոյ, երեսփ. ժողովը լուծուի պիւտճէին քուէարկուելէն յառաջ, Նախարարը կրնան կայսերական իրատէսի մը համաձայն տրուած որոշմամբ նախընթաց տարւոյն պիւտճէն ՚ի կիր արկանել մինչև ցմերձա կայ տարեկան գումարումն, սա պայմանաւ որ սոյն պիւտճէին առժամանակեայ կիրառութիւնը տարւոյ մը սահմանը չ'անցնի:

ՅՕԴ. ձԴ. — Պիւտճէի վերջնական կանոնագրին օրէնքը կը նըշանակէ իրականացեալ հասութից և իրեն պատկանեալ տարւոյն եկամուտներէն եղած վճարմանց համոզումարը և ծախքերը:

Իր ձեւն ու բաժանմունքը՝ Պիւտճէինին նման պէտք է ըլլան:

ՅՕԴ. ձԴ. — Պիւտճէի վերջնական կանոնագրին օրինաց ծրագիրը երեւոյթիանաց ժողովոյն ուշադրութեան կը յանձնուի իր պատկանեալ տարւոյն վերջէն սկսեալ մինչև չորս տարի միջոց:

ՅՕԴ. ձԵ. — Համարակալութեան Ատեան մի պիտի հաստատուի, որոյ պաշտօնը պիտի ըլլայ՝ Գանձուն համարատուաց գործողութիւնքը ինչպէս նաև այլ և այլ Նախարարական ճիւղերէն պատրաստեալ տարեկան հաշուեցուցակները՝ ի քննին առնուլ:

Այս Ատեանը ամեն տարի իւր աշխատութեանց ամփոփումը և իւր յարակից գիտողութիւնքն պարունակող տեղեկագիր մը պիտի ուղղէ առ Երեսփ. Ժողովն:

Միանգամայն ամեն եռամսեայ միջոցի վերջը՝ Մեծ-Եպարքոսին ձեռամբ Գանձային կացութեան նկարագիրը բովանդակող մասնաւոր տեղեկագիր մի պիտի մատուցանէ առ վեհ. Սուլթանն:

ՅՕԴ. ձԶ. — Համարակալութեան Ատեանը ցիւեանս պաշտօն վարելի և կայսերական իրատէսով անուանեալ 12 անդամներէ պիտի բաղկանայ:

Այս անդամներէն մին՝ այն ատեն պաշտօնանկ կըլլայ, երբ իւր պաշտօնանկութեան պատճառաբանեալ առաջարկութիւնք երեսփ. Ժողովոյ ձայնից առաւելութեամբ տուած որոշմամբն վաւերացեալ է:

ՅՕԴ. ձԷ. — Համարակալութեան Ատենին Անդամներէն պահանջելի պայմաններն ու հանգամանքն, իրենց իրաւասութեանց մանրամասն պարագայներն, հրատարման, յաջորդի կարգման, յառաջացման և պաշտօնադադարման պարագայից մէջ գործադրելի կանոններն ինչպէս և նոյն Ատենին Գիւաններուն կարգադրութիւնքը ուրոյն օրէնքով մի պիտի որոշուին:

ԳԱՒԱՌԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՅՕԴ. ձԸ. — Գաւառաց վարչութեան հիմը պիտի ըլլայ ասակեղբոնացման (տէսանթրալիզատիօն) սկզբունքը:

Այս կարգադրութեան մանրամասն պարագայներն օրէնքով մը պիտի որոշուին:

ՅՕԴ. ձԹ. — Ուրոյն օրէնք մի առաւել ընդարձակագոյն հիմանց վրայ պիտի խորսխէ Գաւառաց (վիլայէթ), Սանճարներու և գիւղաքաղաքներու (քաղա) վարչական ժողովոց, ինչպէս և այն ընդհանուր ժողովոյն ընտրութիւնք՝ որ տարուէ տարի կը գումարի իւրաքանչիւր գաւառի գաւառագլուխը:

ՅՕԴ. ձԺ. — Գաւառային Ընդհ. Ժողովոյն իրաւասութիւնքն պիտի որոշուին յիշեալ յատուկ կանոնագրով և պիտի բովանդակեն՝

Արտօնութիւն խորհրդակցելու հասարակաց օգտին վերաբերեալ առարկայից վրայ, ինչպէս են հաղորդակցութեան ճանապարհաց շինութեան, երկրագործական վարկի սնտուկներու հաստատութեան, արուեստից, վաճառականութեան և երկրագործութեան զարգացման և հասարակաց կրթութեան ծաւալման վրայ:

Նոյնպէս իրաւունք պիտի ունենայ տրտունջ բառնալու առ ձեռնհաս իշխանութիւնս թէ տրոց բաշխման և հաւաքման, և թէ այլ ամեն պարագայից մէջ օրինաց և կանոնաց հակառակ գործուած զեղծմանց և գործոց դարման և հատուցումն ստանալու համար:

ՅՕԴ. ձԻԱ. — Իւրաքանչիւր գիւղաքաղաքի (քաղա) մէջ խորհուրդ մի պիտի գտնուի այլ և այլ կրօնական հասարակութեանց պատկանող այս խորհրդոյն պաշտօնը պիտի ըլլայ հակակշռել՝

1. Անշարժ ստացուածոց կամ վաղֆի (բարեպաշտական հաստատութեանց) եկամտից վարչութիւնք՝ որոց մատակարարութեան սեպհական սահմանումը (տէսթինասիօն) հիմնարկուաց կամ սովորութի տրամադրութեամբք որոշեալ է:

2. Կտակներու միջոցաւ գոյացեալ հասութից կամ ընչից ավքատասիրական կամ բարեգործական նպատակներու կիրառութիւնք:

3. Որբերուն եկամտից վարչութիւնք՝ ըստ տրամադրութեան առ այս հաստատեալ յատուկ կանոնագրին:

Իւրաքանչիւր խորհուրդ պիտի բաղկանայ՝ հաստատելի յատուկ կանոնագրին տրամադրութեան համաձայն իւր ներկայացուցած հասարակութեան կողմանէ ընտրեալ անդամներէ:

Այս խորհուրդները տեղական իշխանութիւններէն և Գաւառական Ընդհ. Ժողովներէն կախում պիտի ունենան:

ՅՕԴ. ձԻԲ. — Թաղապետական գործերը կը տնօրինուին, և Պօլիս և ի Գաւառս, ընտրեալ թաղապետական խորհուրդներու միջոցաւ:

Թաղապետական խորհրդոց կազմակերպութիւնը, Կրենց իւրաւասութիւնները և անդամոց ընտրութեան եղանակը ուրոյն օրէնքով մի պիտի որոշուին:

ՁԱՆԱԶԱՆ ՏՐԱՄԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ՅՕԴ. ձժԳ. — Երբ Կայսրութեան հողին մէկ կէտին վրայ յուղմունք կանխատեսել տալու տրամադիր ցոյցեր կամ արարքներ հաստատուին, Կայսերական կառավարութիւնը իրաւունք ունի հոն պաշարման վիճակ (էթա տը սիէթ) հրատարակելու:

Պաշարման վիճակին արդիւնքն կը կայանան քաղաքային օրինաց առժամանակեայ կախակայման մէջ:

Պաշարման վիճակի ենթարկեալ տեղեաց վարչութեան եղանակը ուրոյն օրէնքով մի պիտի կարգադրուի:

Ոստիկանութեան վարչութեան կողմանէ քաղեալ արժանահաւատ տեղեկութիւններէ զինի, Պետութեան ապահովութեանն իբր վնասաբեր ճանչցուած անձինքը Կայսրութեան ղէն արտաքսելու սեպհական իրաւունքն վեհ. Սուլթանին կը պատկանի:

ՅՕԴ. ձժԴ. — Նախնական կրթութիւնը համայն Օսմանցւոց համար պարտաւորիչ պիտի ըլլայ:

Սորա գործադրութեան մանրամասն պարագայներն ուրոյն օրէնքով մի պիտի որոշուին:

ՅՕԴ. ձժԵ. — Սահմանադրութեան և ոչ մի տրամադրութիւնը կրնայ, ո՛ր և է պատրուակաւ, կախակայուիլ կամ անգործադրելի մնալ:

ՅՕԴ. ձժԶ. Երբ ստուգիւ հարկեցուցիչ պատճառ մի կայ, Սահմանադրութեան տրամադրութիւններէն մանք կրնան բարեփոխիլ: Այս բարեփոխումը յետագայ պայմաններուն ստորագասեալ է,

Ամեն բարեփոխման առաջարկութիւն՝ որ ներկայացեալ է Նախարարութենէն կամ երկու ժողովոց մէկէն, նախապէս հարկ է որ երեւի. ժողովոյն խորհրդակցութեան յանձնուի:

Եթէ առաջարկութիւնը՝ սոյն ժողովոյն անդամոց երկու երրորդին մեծամասնութեամբը վաւերացուի, Երեւոյտին կը հաղորդուի:

Երբ Երեւոյտն՝ նոյնպէս առաջարկեալ բարեփոխումը իւր անդամոց երկու երրորդին մեծամասնութեամբն ընդունի, ապա վեհ. Սուլթանին հաւանութեանը կը մատուցուի:

Եւ եթէ Կայսերական իրատէով վաւերացուի, օրինաց ուժ կ'ունենայ:

Բարեփոխման առաջարկութեան առարկայ եղող ամեն Սահմանադրական տրամադրութիւն գործադրելի կը մնայ մինչեւ որ առաջարկութիւնը ժողովոց խորհրդակցութեան բովէն ոնցներէ յետոյ, Կայսերական իրատէով վաւերանայ:

ՅՕԴ. ձժԷ. — Օրինաց մեկնութիւնը կը պատկանի՝ վճռալինջ Ատենին՝ քաղաքային և եղեւնական օրինաց մասին,

Պետական խորհրդոյ կը պատկանի վարչական օրինաց մասին, եւ Երեւոյտի կամ Աւագաժողովոյն՝ Սահմանադրական տրամադրութեանց մասին:

ՅՕԴ. ձժԸ. — Այժմ գործադրութեան մէջ գտնուած օրինաց, կանոնաց և սովորութեանց տրամադրութիւնները գործադրելի պիտի ըլլան, քանի որ նոր օրէնքներով կամ կանոններով բարեփոխուած կամ ջնջուած չ'են:

ՅՕԴ. ձժԹ. — 1293 Հիճրէթի թուականին շէվվալ ամսոյ 10 ին (16/28 հոկտեմբեր 1876) հրատարակեալ և Ընդհ. ժողովոյ վերաբերեալ առժամանակեայ հրահանգը՝ ժողովոյն առաջին տարեկան ումարման փակման թուականէն սկսեալ այլ ևս զրութիւն չը պիտի ունենայ:

Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page. The text is arranged in several lines and is difficult to decipher due to its lightness and the paper's texture.

Faint, illegible text at the bottom of the page, possibly a signature or a date.

2013

«Ազգային գրադարան»



NL0046291

